# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.09.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2017/34**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.08.2017թ. թիվ 03/26-3/15283-17 գրությամբ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ազգային ժողովի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 17.08.2017թ. թիվ Ա-427 գրության հիման վրա, 22.08.2017թ. թիվ 03/26-3/15283-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>Ազգային ժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ազգային ժողովը 17.08.2017թ. թիվ Ա-427 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ազգային ժողովի կարիքների համար համարկգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով 2017թ. հուլիսի 25-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգ: Սույն թվականի օգոստոսի 2-ին բացման նիստում փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ հանձնաժողով) արձանագրեց մասնակիցների կողմից թույլ տված անհամապատասխանությունները (Հավելված 1 և Հավելված 3):

Կազմակերպություններին հանձնաժողովը առաջարկեց մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ուղարկել հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Սակայն «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել շտկված տարբերակները, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին Հավելված 1-ում հրավերով պահանջվել էր նշել գտնվելու և/կամ գրանցման հասցեն և հեռախոսահամարը և 3-րդ Հավելվածում հստակեցնել մրցույթի ծածկագրերը:

Միաժամանակ հայտնում ենք, որ բոլոր մասնակիցներին արձանագրություններն ոչ ավտոմատ ծանուցմամբ ուղարկվել է www.armeps.am կայքի միջոցով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 42-րդ կետը՝ հանձնաժողովը մերժեց «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը»:

Ի լրումն 17.08.2017թ. թիվ Ա-427 գրությամբ ներկայացված դիրքորոշման՝ Պատվիրատուն 15.09.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքը /այսուհետ՝ օրենք/ կարգավորող իրավական ակտի՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, իսկ 42-րդ կետով, եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կազմակերպությունը հիմնավորում է մի դեպքում, որ արձանագրությանը ծանոթանալուց հետո մտածել է, որ հայտում առկա անճշտությունները վերացնելու համար ունի բավարար ժամանակ և կհասցնի շտկել այն, իսկ մյուս դեպքում նշում է, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկները ոչ մի չափաբաժնով չեն հավակնում ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող և հիմք ընդունելով օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը՝ կարևոր չի համարել ներկայացված հայտի փաստաթղթերում առկա անճշտությունների շտկումը: Նշված հիմնավորումից նաև ակնհայտ է, որ կազմակերպությունը հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից: Ուստի հիմք ընդունելով կարգի 45-րդ կետը, որի համաձայն. «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը», նշված կազմակերպության տվյալներն ուղարկվել է լիազոր մարմնին:

Վերոգրյալով պայմանավորված և ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ կազմակերպության կողմից ներկայացված դիրքորոշումները հայտնում ենք, որ դեռ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությունները չեն կարող առաջին տեղ զբաղեցնող ճանաչվել, քանի դեռ փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման:

Իսկ ինչ վերաբերում է առաջին տեղ զբաղեցնելուն, ապա հայտնում ենք, որ ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկ էր ներկայացրել նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն և, քանի որ նշված չափաբաժնի մասով գերազանցում էր մասնակիցների ներկայացված գնային առաջարկները նախատեսված նախահաշվային գնից, նիստը կասեցվել է և մասնակիցները հրավիրվել են բանակցությունների, որում կարող էր մասնակցել նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Հովհաննիսյան Ռուզաննան:

### 3. <u>«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն 28.08.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Կոմպմարկետ» ՍՊԸ-ն գնումների էլեկտրոնային Armeps համակարգի միջոցով մասնակցության հայտ է ներկայացրել Ազգային ժողովի կարիքների համար համակարգչային եւ պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով 2017 թվականի հուլիսի 25-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՓԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով:

02.08.2017թ. ժամը 10:30-ին նախատեսված էր հայտերի բացումը: Հայտնի է, որ հայտերի բացման ժամկետը լրանալուց հետո Armeps համակարգը հնարավորություն է տալիս ծանոթանալու բացման ընթացակարգի մասնակիցների ցուցակին և նրանց ներկայացրած գնային առաջարկներին: Օգտվելով այդ հնարավորությունից՝ մենք մինչև հանձնաժողովների բացման նիստերի արձանագրություններն ստանալը ներբեռնում և կատարում ենք ընթացակարգերի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների վերլուծություն: Այս ընթացակարգի համար նույնպես, մինչև գնահատող հանձնաժողից բացման նիստի արձանագրությունները ստանալը, համակարգից ներբեռնել ենք ընթացակարգին ներկայացրած գնային առաջարկները եւ տեղյակ էինք, որ մեր ներկայացրած գնային առաջարկները ոչ մի չափաբաժնով ամենացածրը չեն: Լավ իմանալով մրցույթի մասնակիցների հնարավորությունները և համոզված լինելով, որ նրանք փորձառու կազմակերպություններ են, այս ընթացակարգի վերաբերյալ մեր հետագա գործողություններում ենթադրել ենք, որ ընթացակարգին ցածր գին

ներկայացրած մասնակիցները սխալված չեն լինի իրենց գնային առաջարկներում և մենք հնարավորություն չենք ունենա տվյալ ընթացակարգում որևէ պատվեր ստանալու:

Օգոստոսի 3-ին ժամը 17:10 Armeps համակարգից մեր info@comp.am էլեկտրոնային հասցեին ստացել ենք այս ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը: Արձանագրության 3.2 եւ 3.3 կետերով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին առաջարկվել է շտկել հայտի հավելված 1-ում և հավելված 3-ում տեղ գտած անճշտությունները: Արձանագրությանը ծանոթանալուց հետո մենք մտածել ենք, որ հայտում առկա անճշտությունները վերացնելու համար ունենք բավարար ժամանակ եւ դա կհասցնենք անել դրա համար նախատեսված ժամկետի վերջում: Սակայն ստացվեց այնպես, որ այդ ժամանակում առաջացան անձնական բնույթի հանգամանքներ, որոնց պատճառով մենք ֆիզիկապես չհասցրեիցինք կատարել անճշտությունների վերացումը: Անճշտությունների չվերացմանը նպաստել է նաև առաջացած հարցի նկատմամբ մեր հետևյալ մոտեցումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր կողմից ներկայացված գնային առաջարկները ոչ մի չափաբաժնով չեն հավակնում ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը՝ մենք մեր և պատվիրատուի համար կարևոր չենք համարել ներկայացված հայտի փաստաթղթերում առկա անճշտությունների շտկումը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի՝ ընթացակարգին ներկայացված հայտերում անհամապատասխանությունների առկայության դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Մեր կողմից ներկայացված հայտը մինչև հայտում առկա անճշտությունների գնահատող հանձնաժողովի կողմից շտկելու վերաբերյալ առաջարկը եւ այդ առաջարկը մեր կողմից չկատարելուց հետո ուղղակի եղել է ընթացակարգի պահանջներին անհամապատասխան և ենթակա է եղել անբավարար գնահատականի և մերժման:

Օգոստոսի 8-ին ժամը 18:15 Armeps համակարգից մեր info@comp.am էլեկտրոնային հասցեին ստացել ենք ընթացակարգի վերաբերյալ հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը: Ստացված արձանագրությունից տեղեկացել ենք, որ մեր կողմից ներկայացված հայտը մերժվել է: Որևէ կասկած չունենալով հայտի վերաբերյալ հանձնաժողովի այլ մեկնաբանությունների հնարավորության վերաբերյալ, մենք արձանագրությունում առկա մերժման հիմքին ուշադրություն չենք դարձրել:

Օգոստոսի 23-ին emilsargsyan@armeps.am հասցեից մեր info@comp.am էլեկտրոնային հասցեին ստացել ենք անակնկալ տեղեկություն առ այն, որ օգոստոսի 28-ին ժամը 16:00-ին նշանակված է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության առաջին նիստը: Քանի որ տվյալ նամակում որևէ տեղեկություն չկար նախաձեռնած պաշտոնական ընթացակագի հիմքերի վերաբերյալ, ապա՝ ի պատասխան նշված էլեկտրոնային նամակի, էլեկտրոնային նամակով խնդրեցինք մեզ տրամադրել նշված հիմքերը: Նշված հիմքերը մենք ստացանք Հայփոստի միջոցով մեզ ուղարկված ծրարով օգոստոսի 26-ին: Մինչև ծրարի ստանալը www.gnumner.am կայքի բողոքարկումների բաժնում առկա տեղեկատվությունից արդեն գտել էինք նշված նիստի վերաբերյալ ինֆորմացիան և հասկացել էինք, թե որ ընթակարգի արդյունքում ենք արժանացել նման անակնկալի: Միայն սրանից հետո մանրամասն ուսումնասիրեցինք հանձնաժողովի բացման նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի երկրորդ պարբերությամբ մեր հայտի մերժման հիմքերը: Մեզ համար պարզ դարձավ, որ հենց այս արձանագրությամբ պատվիրատուն նախատեսել էր միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական գործընթաց սկսելու համար: Այսպիսով, թիվ 3 արձանագրությունում որպես «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգին ներկայացրած մասնակցության հայտի մերժման հիմք նշվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի գ. ենթակետը և ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 42-րդ կետը: Մեջբերենք 42-րդ կետը՝

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Քանի որ այս կետում հղում է արվում 41-րդ կետին, ապա մեջբերենք նաև 41-րդ կետը՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը,

կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերը նշված կետում, «Գնումների մասին» ՀՀ օրենքում եւ օրենքի կիրարկման կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության թիվ N 526-Ն որոշմամ մեջ չի նախատեսված որևէ դրույթ այն մասին, որ վերը նշված 41-րդ կետի առաջարկը պարտադիր է կատարման համար մասնակցի կողմից և դրա չկատարաումը պետք է մեկնաբանել որպես մասնակցի կողմից ընթացակարգի հետագա գործընթացից հրաժարվել: Այնինչ ընթացակարգի հանձնաժողովը՝ համաձայն ընթացակարգի թիվ 3 արձանագրության, հայտի չշտկելը մեկնաբանել է որպես ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվել և դրանով հիմք է ստեղծել մեր կողմից ներկայացված հայտը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի գ. ենթակետին համապատասխան մերժելու համար:

Մեր կարծիքը մնում է այն, որ մեր կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով: Մենք համոզված ենք, որ մեր հայտի վերաբերյալ մնացած բոլոր մեկնաբանությունները չեն համապատախանում իրականությանը և հակասում են «Գնումների մասին» ՀՀ օրենքին:

Վերջում հարկ ենք համարում ներկայացնել մեր հայտում տեղ գտած անճշտությունները և դրանց պատճառները: Նոր ընթացակագերի համար մասնակցության հայտ պատրաստելիս մեզ մոտ աշխատանքը կազմակերպված է այնպես, որ օգտագործվում է նախկին՝ այլ ընթացակարգերի համար պատրաստված, հայտերի փաստաթղթերը: Այս ընթացակարգի հայտը նույնպես մեր կողմից պատրաստվել է այլ ընթացակարգի փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով: Հայտերի մեջ ընգրկվող փաստաթղթերից մեծ մասում որպես կանոն փոփոխությունները հիմնականում ընթացակարգերի ծածկագրերի փոփոխություններն են և կատարվում են մեխանիկորեն: Այս ընթացակարգի հայտը պատրաստելու ժամանակ մենք (ինչպես նաև ընթացակարգի մյուս մասնակիցները) չենք նկատել, որ պատվիրատուն, բացի օրենքով սահմանված և հավելված 1-ի համար օրինակելի ձևով նախատեսված տեղեկություններից, մասնակիցներից պահանջել է նաև մասնակցի իրավաբանական կամ գտնվելու վայրի հասցեն եւ հեռախոսահամարը, իսկ

հավելված 3-ի համար մենք տիտղոսային մասում փոխել ենք ընթացակարգի ծածկագիրը, իսկ տեքստային մասում անուշադրության հետեւանքով ծածկագիրը չենք փոխել: Մենք այն կարծիքին ենք, որ եթե մեր կողմից ներկայացված հայտը պատվիրատուի համար հետաքրքրություն ներկայացներ որպես գնային առաջարկ, ապա այն կարող էր բավարար գնահատվել նաև առկա անճշտություններով կամ հանձնաժողովի վերջնական որոշումից առաջ մեզ ևս մեկ անգամ կառաջարկվեր շտկել անճշտությունները և կզգուշացվեր, որ հայտերի չշտկման դեպքում մեր գործողությունները մեկնաբանվելու են որպես ընթացակարգի հետագա աշխատանքներից հրաժարվել:»:

Ընկերությունը ի լրումն 28.08.2017թ. ներկայացրած գրության 11.09.2017թ.Խորհրդին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հարկ ենք համարում նախկինում ներկայացված մեր դիրքորոշմանն ավելացնել, թե ինչպես ենք մենք հասկանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (Օրենք) և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ սահմանված կարգի (Կարգ) քննարկման առարկային վերաբերվող հոդվածները և դրույթները, որոնց վրա ուղիղ կամ անուղակի հղում է կատարվել՝ որպես պատվիրատուի կողմից մեր հայտը մերժելու հիմքեր:

- ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. գնումների գործընթացի կազմակերպման կարգի վերաբերյալ որոշման 41-րդ կետում սահմանված է (պատվիրատուի կողմից որպես հիմք նշված է Կարգի 42-րդ կետը, որտեղ հղում է արված 41-րդ կետին)՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով մասնակիցներին հնարավորություն է տրվում իրենց կողմից ներկայացված հայտերում թույլ տրված ոչ էական անճշտությունները վերացնել: Այս հնարավորությունը տրված է հօգուտ գնման ընթացակարգերի

մասնակիցների, որպեսզի վերջիններս թույլ տրված ոչ էական անճշտությունների պատճառով չզրկվեն ընթացակարգի հետագա մասնակցությունից, քանի որ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտում առկա անհամապատասխանությունների դեպքում հայտը ենթակա է մերժման: Եթե մասնակիցը՝ ելնելով հայտերի բացումից հետո ընթացակարգի մասնակիցների և նրանց կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ ստացված տեղեկություններից, ընթացակարգին մասնակցության շարունակության մեջ տեսնում է պատվեր ստանալու հնարավորություն, ապա նա անշուշտ շահագրգիռ պետք է լինի շտկելու անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից, եթե շտկում չի կատարվում, որը նրան համաձայն կարգի 41-րդ կետի առաջարկվում է, այլ ոչ պարտավորեցվում, ապա ի սկզբանե մասնակցի օգտին 41-րդ կետով ստեղծված հնարավորությունը չպետք է դառնա վերջինիս նկատմամբ պատիժ կիրառելու հիմք: Ավելին, ինչու՞ հայտի գնային առաջարկի, կամ հայտի ապահովման մեջ առկա անհամապատասխանությունների պարագայում հայտը մերժվում է մասնակցի համար հետագա գնման գործընթացների մասնակցության տեսանկյունից անհետևանք, իսկ տվյալ գնման գործընթացի արդյունքի տեսակետից ոչ էական անճշտություններ պարունակող չշտկված հայտերը պետք է մերժվեն և մասնակցի նկատմամբ պետք է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներգրավելու գործընթաց:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6)-րդ ենթակետով սահմանված է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից: Ստեղծված իրավիճակում հայտի չշտկելը ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու գործողություն որակելը հիմնավոր չէ, քանի որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից առկա չէ այդ մասին որևէ գրավոր կամ բանավոր հայտարարություն: Եթե պատվիրատուի համար մեր հայտը տնտեսական հետաքրքրություն էր ներկայացնում, ապա մեր հայտը չշտկված վիճակում նույնպես կարող էր մնալ քննարկման առարկա, կամ գոնե մեկ անգամ ևս մեզ կտեղեկացվեր եւ կհորդորվեր հայտը շտկելու անհրաժեշտության և չշտկելու դեպքում իրենց կողմից կատարվելիք հնարավոր քայլերի մասին: Ի վերջո գնումների գործընթացի կազմակերպման հիմնական նպատակը առաջին հերթին պատվիրատուների համար տնտեսապես շահավետ գնային առաջարկներ ստանալն է,

այլ ոչ թե ընթացակարգի մասնակիցներին հակառակորդ ճամբարի ներկայացուցիչ համարելը և նրանց պատժելու հիմքեր որոնելը: Քանի որ քննարկվում է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հետագա տնտեսական գործունեության սահմանափակման հարցը, ապա հարկ եմ համարում մի քանի տեղեկություն տրամադրել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի մասին: «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ստեղծվել է 2001 թվականին և զբաղվում է համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների վաճառքով և երաշխիքային ու ետերաշխիքային սպասարկմամբ: Գործունեության ամբողջ ընթացքում ընկերությունն ունեցել է կայուն շրջանառություն և պարտաճանաչ կատարել է իր գործունեության արդյունքում առաջացած հարկային պարտավորությունները: Վերջին 5 տարիների ընթացքում ընկերության տարեկան շրջանառությունը միջինում 400 միլիոն դրամից ավելի է, իսկ տարեկան վճարած հարկերը՝ ավելի քան 80 միլիոն դրամ: 2017 թվականի առաջին 8 ամիսների ընկերության շրջանառությունը կազմում է ավելի քան 360 միլիոն դրամ, իսկ վճարած հարկերը կազմում են մոտ 60 միլիոն ՀՀ դրամ:

Սկսած 2014 թվականից «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ակտիվորեն մասնակցում է պետական գնումների ընթացակարգերին, որի արդյունքում հաճախ ստանում է մատակարարումներ կատարելու պայմանագրեր կնքելու իրավունք: Ընդհանուր առմամբ՝ 2014 թվականի օգոստոս ամսից սկսած, գնումների ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի շրջանակներում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից պետական հիմնարկ-ձեռնարկությունների հասցեներով մատակարարել է ավելի քան 800 միլիոն ՀՀ դրամի ապրանք (համակարգչային եւ պատճենահանման սարքվորումներ և ծախսվող նյութեր): Պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարվել են ժամանակին և պատշաճ մակարդակով:»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն՝ Գագիկ Ջուլհակյանը և լիազորված անձ Հասմիկ Ենգոյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2017/34 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 22.08.2017թ. թիվ 03/26-3/15283-17 գրությունը, Ազգային ժողովի 17.08.2017թ. թիվ Ա-427 գրությունը, «ՀՀ ԱԺ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱԺ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.08.2017թ. նիստի N 2 և 08.08.2017թ. նիստի N 3 արձանագրությունները, Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված կարծիքները և գրավոր դիրքորոշումները:

Ազգային ժողովը համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ ԱԺ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՓԿ-ԳՀԱՊՁԲ(15/8)-17/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը 02.08.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 2 արձանագրության՝

- 3.2 կետով որոշել է նիստը կասեցնել, քանի որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 3-ի ծածկագրերում անրձանագրվել է անհամապատասխանություն, ինչի վերաբերյալ առաջարկել է շտկել անհամապատասխանությունը, կամ, եթե դրա անհրաժեշտությունը չկա, ներկայացնել պարզաբանում,
- 3.3 կետով Հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ով ներկայացված դիմումում արձանագրել է անհամապատասխանություն Հրավերի պահանջներին, այն է՝ նշված հավելվածում բացակայել է Ընկերության իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեն և հեռախոսահամարը:
- 3.4 կետով Հանձնաժողովը առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 08.08.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով մերժել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը՝ նշված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի՝

- 2-րդ կետի համաձայն՝ հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:
- 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3 կետի՝ 1-ին ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ նույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին, պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում որակավորումը հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հրավերի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի՝

- հավելված 1-ով սահմանված՝ մասնակցի կողմից ներկայացվող մասնակցության դիմումով նախատեսված են հետևյալ պարտադիր վավերապայմանները՝ մասնակցի անվանումը, պատվիրատուի անվանումը, չափաբաժնի համարը, երկրի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ղեկավարի պաշտոնը, անունը ազգանունը և ստորագրությունը;
- հավելված 3-ով սահմանված՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ նախատեսված են հետևյալ պարտադիր վավերապայմանները՝ մասնակցի անվանումը և ընթացակարգի ծածկագիրը:

Մինչդեռ, «ՀՀ ԱԺ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հրավերի հավելված 1-ով նախատեսվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևի նույն հավելվածով չնախատեսված վավերապայման, այն է՝ իրավաբանական և/կամ գնտվելու վայրի հասցեն և հեռախոսահամարը: Ընդ որում,

մասնակցի հայտը հանձնաժողովի կողմից մերժվել է հենց վերոնշյալ վավերապայմանը չլրացնելու հիմնավորմամբ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ ԱԺ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից նույն ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանվել է լիազորված մարմնի կողմից գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթի՝ հրավերի օրինակելի ձևով չնախատեսված վավերապայման:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովի 02.08.2017թ. ժամը 10:30 տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետով՝ անհապատասխանությունը շտկելու կամ, եթե դրա անհրաժեշտությունը չկա, պարզաբանում ներկայացնելու առաջարկություն ներկայացնելով՝ հստակ և մանրամասն չի նկարագրել, թե Ընկերության հայտով ներկայացված հավելված 3-ում ինչ անհամապատասխանություն է արձանագրվել, դրանով իսկ չի որոշակիացրել Ընկերության կողմից նշված փաստաթղթի շտկմանն ուղղված գործողությունները:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ խախտել է օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.08.2017թ. թիվ 03/26-3/15283-17 գրությամբ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**